ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 հուլիսի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

98
(2764)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԹԱՂԱՊԵՏԻ ՊԱՏԿԱՌԵԼԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

2012 թվականից Երեւանի քաղաքապետարանի առողջապահության վարչության պետի պաշտոնը զբաղեցնող Կամսար Բաբինյանը պատկառելի ունեցվածք ունի, եթե հաշվի առնենք, որ նա երկար տարիների պաշտոնյա է եւ համեստ աշխատավարձ է ստացել: Իհարկե, «թղթերով ամեն ինչ կարգին է» ձեւակերպումը միանշանակ համապատասխանում է թաղապետի վարքագծին:

Ըստ նրա պաշտոնական հայտարարագրի՝ Երեւանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար Կամսար Բաբինյանը հայտարարագրել է 3 բնակարան եւ 1 ավտոտնակ: Իհարկե, բնակարաններից երկուսը եւ ավտոտնակը, որոնք գտնվում են Մալաթիա-Սեբաստիա եւ Աջափնյակ վարչական շրջաններում, ժառանգություն է ստացել թաղապետը, իսկ մյուս բնակարանը գնել է Կենտրոն վարչական շրջանում: Բաբինյանի ստացած վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 17 մլն 269 հազար դրամ, որից 15 մլն 069 հազարը բնակարանի հիփոթեկ է:

2012 նշանակվելով Երեւանի քաղաքապետարանի առողջապահության վարչության պետ՝ Բաբիկյանը 2015 թվականին ձեռք է բերել բնակարան, այժմ այդ բնակարանի հիփոթեկի մայր գումարը կազմում է 15 միլիոն: Եթե հաշվի առնենք, որ 7 տարի առաջ Բաբինյանը ստանում էր շատ համեստ աշխատավարձ, քան այս պահին՝ լինելով վարչական շրջանի ղեկավար, ինչպե՞ս է իրեն թույլ տվել նման արժողությամբ բնակարան ձեռք բերել:

Տեղեկացնենք, որ Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի կանխիկ դրամական միջոցները նախորդ տարի կազմել են 3 մլն դրամ, 75 հազար դոլար եւ 7 հազար եվրո, իսկ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 9 մլն 100 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային կառավարչական հիմնարկից:

Իսկ ամենաուշագրավն այն է, որ պատերազմից մեկ տարի անց՝ 2021-ին, Բաբինյանը նոր՝ 1 տարվա վաղեմության MERCEDES-BENZ մակնիշի մեքենա է գնել:

Եթե ամփոփելու լինենք, պետք է նկատել, որ ապօրինի ծագման գույքով հետաքրքրված ՀՀ գլխավոր դատախազությունը տարօրինակ կերպով չի հետաքրքրվում՝ նախկին, իսկ այժմ ներկաների հետ նույն թիմով աշխատող թաղապետը ինչպես է ձեռք բերել իր ունեցվածքը:

Հիշխանական էլիտան հինգշաբթի օրը՝ հուլիսի 6-ին, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ հավաքվել էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակում կուսակցության նախաձեռնող խմբի նիստին: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ դռնփակ նիստին քննարկվել են բացառապես կուսակցական հարցեր, իսկ Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած անվտանգային լրջագույն մարտահրավերները կամ Ադրբեջանի նախագահի կողմից հնչեցրած վերջին սպառնալիքները ՔՊ-ականները չեն էլ քննարկել, մղել են երկրորդ պլան: ՔՊ-ականների համար ավելի առաջնային են ներքաղաքական ու ներկուսակցական հարցերը, օրինակ՝ քննարկել են՝ ինչպես ուժեղացնել կուսակցական կառույցները, ինչպես ավելի շատ երիտասարդների եւ կանանց ներգրավեն կուսակցության շարքերում: Քննարկվել է նաեւ Մալաթիա-Սեբաստիայի ՔՊ գրասենյակի գործունեության հարցը, որը ընտրակեղծիքների համար փաստացի կասեցված է: Նախաձեռնող խմբի նիստի ժամանակ ելույթ են ունեցել Նիկոլ Փաշինյանը եւ ՔՊ վարչության անդամները, հարցուպատասխան չի եղել: Ստացվում է՝ ՔՊ-ականների համար այս իրավիճակում, երբ թշնամին պարբերաբար կրակում է Արցախի եւ Հայաստանի սահմանների ուղղությամբ, անվտանգային կարեւոր հարցերն այլեւս երկրորդական են, տարված են միայն իրենց կուսակցական հարցերով:

Համացանցում երեկ կադրեր հայտնվեցին, որտեղ երեւում է, թե ինչպես են ռուս խաղաղապահները հեռացնում Հակարի կամրջի մուտքի մոտ տեղադրված ադրբեջանական դրոշ: Թե երբ է արվել տեսանյութը, արդյոք նոր միջադեպ է եղել Հակարիի կամրջի հատվածում, այս մասին որեւէ տեղեկություն չկար: «Ժողովուրդ» օրաթերթին հաջողվեց պարզել, որ տեսանյութը նոր չէ, այն արվել է հունիսի 15-ին, երբ Ադրբեջանի սահմանապահ ծառայության մի խումբ զինծառայողներ Հակարիի կամրջի ուղղությամբ առաջխաղացման փորձ էին կատարել Հայաստանի տարածքով դրոշ տեղակայելու նպատակով: Հայկական կողմի ձեռնարկած միջոցների արդյունքում ադրբեջանցի զինծառայողների առաջխաղացման եւ դրոշ տեղադրելու փորձը կանխվել էր:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, թե 1 տոննա հերոինը ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանին պատկանող ընկերությունից ում միջոցով եւ ինչ ճանապարհով է տեղափոխվել ԱԱԾ շենք: Մասնավորապես, 1 տոննա հերոինը ԱԱԾ աշխատակիցների ուղեկցությամբ սեփական մեքենայով ԱԱԾ շենք է տեղափոխել Միհրան Պողոսյանին պատկանող «Մրգենի» ընկերության պահեստապետ Սամվել Գալստյանը, ու այս ամենից հետո տարօրինակ է, որ իրավապահները նրան կալանավորվել են: Նախաքննական մարմինը այս կալանավորումներից հետո խիստ լռություն է պահպանում, կալանավորված անձինք շարունակում են պնդել նախաքննական մարմնում, որ նկատել են տարօրինակ զանգված, տեղյակ են պահել ղեկավար կազմին ու այլ բանից տեղյակ չեն: Նշենք, որ մոտ 250 միլիոն եվրոյի արժողությամբ՝ Հայաստան ներմուծված 1 տոննա կոկաինի դեպքի մասին Ազգային անվտանգության ծառայությունը հայտնել էր մեկ շաբաթ առաջ՝ մայիսի 17-ին: ԱԱԾ-ի տարածած հաղորդագրությունում ասվում էր, որ 2023 թվականի մայիսի 13-ին նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Հայաստանում գործող եւ մրգերի ներմուծմամբ զբաղվող ընկերության կողմից Էկվադորում գտնվող ընկերությունից պատվիրված ապրանքատեսակի հետ տարանցիկ երկրների՝ Պանամայի Հանրապետության, Իտալիայի Հանրապետության եւ Վրաստանի տարածքով Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել կոկաին տեսակի շուրջ 1 տոննա քաշով թմրամիջոց (շուրջ 250 միլիոն եվրո արժողությամբ), որը հայտնաբերվել եւ գտնվում է ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում: Հիշեցնենք, որ ԱԱԾ-ն «Մրգենի» ՍՊ ընկերության փաստացի սեփականատիրոջ՝ Միհրան Պողոսյանի, նույն ընկերության տնօրեն Լեւոն Աթաջանյանի եւ պահեստապետ Սամվել Գալստյանի նկատմամբ խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ապօրինի իրացնելու եւ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի մաքսանենգություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում է կայացրել: Վերջիններիս նկատմամբ, որպես խափանման միջոց, ընտրվել է կալանքը, Պողոսյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

ԶՐՈՒՅՑ

ԱՐՑԱԽԻ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒՄ Է

Արցախի խորհրդարանի «Արդարություն» խմբակցության պատգամավոր Մեսրոպ Հակոբյանի հետ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի լարված իրավիճակի եւ Արայիկ Հարությունյանի վերջին հայտարարության մասին:

-Անմիջապես ու անընդհատ փնտրել տեղեկություն, քան պաշտոնական լրահոսն է, հիմա արդեն ավելորդ է Արցախում, որովհետեւ դա ամենօրյա ռեժիմով է տեղի ունենում: Առհասարակ, մեր գյուղատնտեսական համակարգն է ամբողջովին խանգարված: Այս փոքրիկ տարածքում նույնիսկ բավականին շատ հողատարածքներ կան, որոնք չեն մշակվում հենց թշնամու կրակոցների պատճառով, քանի որ հնարավոր չի այդ տեղերում աշխատանքներ իրականացնել: Ես վաղուց արդեն չեմ հիշում գեթ մեկ օր, որ թշնամին թույլ չտա իրեն խախտել հրադադարի ռեժիմը, եւ գյուղացին կարողանա հանգիստ կատարի իր աշխատանքը: Ընդհանուր առմամբ, մենք անընդհատ այս իրավիճակում ենք:

-Իսկ բնակչությանը որեւէ վնաս պատճառվե՞լ է:

-Բնականաբար, միշտ էլ լինում է, եւ պաշտոնական լրահոսն այդ մասին ասում է: Օրինակ՝ մարդկային կորուստ կարող է չլինել, բայց լինի գյուղատնտեսական աշխատանքների դադար, իսկ դա արդեն իսկ իրենից վնաս է ներկայացնում: Իրենք շատ հաճախ նաեւ տեխնիկան են վնասում, կրակոցները նաեւ բնակելի տարածքին են մոտ լինում, որի պատճառով վնասվում են բնակելի տներ, ինչը եւս պատճառ է դառնում տների վնասման ու երբեմն էլ ինչոր հատվածների փլուզման: Դա պարբերական բնույթ է կրում, եւ ամեն օր առիթ է սա հանդիսանում, որ մեզնից հեռու գտնվողները, մեր հայրենակիցները Հայաստանում ի վերջո եւս պատկերացնեն, որ, հումանիտար խնդիրներից բացի, կա նաեւ այլ խնդիր: Այստեղ բառիս բուն իմաստով պատերազմ է, եւ այն կանգ չի առել:

-Հայտնի է դարձել նաեւ, որ Արայիկ Հարությունյանը պատրաստվում է Բաքվի հետ երկխոսության գնալ: Այս ամենը ո՞ր է տանում՝ ըստ Ձեզ: Ի՞նչ կարելի է սպասել:

-Անկեղծ ասած, վերջին շրջանում Արցախի իշխանությունների, մասնավորապես՝ նախագահի պահվածքը խիստ տարակուսելի է եւ անհանգստացնող: Նախ իրենց ուղերձներում եւ իրենց հայտարարություններում իրենք արտահայտում են այն միտքը, ինչ մենք ենք արտահայտում, եւ այն, ինչը ժողովրդի կամքն է, այն է երկխոսության չբռնվել Ադրբեջանի հետ, քանի որ այն ուղիղ ծուղակ է Արցախի համար այն առումով, որ նման փորձ արդեն ունեն Արցախի իշխանությունները, երբ, իբրեւ թե, հիմնավորել է, որ հումանիտար հարցերի շուրջ են գնում քննարկման, ինչի արդյունքում իրենք, կարծում եմ, որ պետք է համոզվեին, որ Ադրբեջանն ունի ընդամենը մեկ օրակարգ, այն է՝ Արցախի բռնակցումը Ադրբեջանին, ինչին որ սատարում են նաեւ Հայաստանի իշխանությունները:

Զրուցեց ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

ՄԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ԸՆԴԴԵՄ ԱՎԻՆՅԱՆԻ

Gallup International Association-ը երեւանցիներից հետաքրքրվել է, թե ում օգտին են պատրաստվում քվեարկել սեպտեմբերին սպասվող ավագանու ընտրություններին:

Հարցվածների 10.1 տոկոսը կքվեարկի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը գլխավորող Տիգրան Ավինյանի օգտին, 8.2 տոկոսը կքվեարկի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի օգտին, 5.3 տոկոսը՝ «Հայաստան» դաշինքի՝ Լեւոն Քոչարյանի գլխավորությամբ, եւ 4.5 տոկոսը՝ ՀՀԿ-ի՝ Տարոն Մարգարյանի գլխավորությամբ:

«Հարցին դժվարացել է պատասխանել 30.2 տոկոսը: Սա դասական պատկեր է այս շրջանի համար: Նորմալ բաշխվածությունն է սաղմնային փուլում, որովհետեւ ընտրությունները լինելու են երեք ամսից, շատ քիչ թեկնածություններ են հաստատվել, մնացածները դեռ խոսակցություններ են: Երբ որ սկսվի ակտիվ քարոզարշավը, այս ցուցանիշներում փոփոխություններ կտեսնենք»,- լրագրողների հետ հանդիպմանն ասաց ասաց Gallup International Association հայկական ներկայացուցչության ղեկավար Արամ Նավասարդյանը:

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԳՈՐԾՈՒՂՎԻ ՓԱՐԻԶ

Հաջորդ շաբաթ՝ հուլիսի 10-13-ը, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը աշխատանքային այցով կգործուղվի Փարիզ: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Ազգային ժողովի նախագահի գլխավորած պատվիրակության կազմում լինելու են

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը,

Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, Հայաստան-Ֆրանսիա բարեկամական խմբի ղեկավար Վլադիմիր Վարդանյանը,

ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը,

ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արուսյակ Մանավազյանը,

«Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանը:

Բացի պատգամավորներից, պատվիրակության կազմում կլինեն նաեւ

ԱԺ նախագահի մամուլի քարտուղար Ծովինար Խաչատրյանը,

ԱԺ նախագահի խորհրդատու-օգնական Համլետ Գեւորգյանը,

Ազգային ժողովի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Տիգրան Սեյրանյանը,

Ազգային ժողովի աշխատակազմի արարողակարգի վարչության պետ Ալեքսանդր Մխիթարյանը,

Ազգային ժողովի աշխատակազմի արարողակարգի վարչության անձնագրային սպասարկման բաժնի պետ Նարինե Բաղալյանը,

Հայաստան-Ֆրանսիա բարեկամական խմբի քարտուղար, ԱԺ աշխատակազմի արտաքին կապերի վարչության միջազգային կազմակերպությունների բաժնի գլխավոր մասնագետ Էդուարդ Բաղոյանը,

ԱԺ աշխատակազմի հասարակայնության հետ կապերի եւ հաղորդակցության վարչության լրատվության արտադրության բաժնի լուսանկարիչ-օպերատոր Դավիթ Հակոբյանը,

ԱԺ աշխատակազմի հասարակայնության հետ կապերի եւ հաղորդակցության վարչության լրատվության արտադրության բաժնի հեռուստաօպերատոր Վարազդատ Եղիազարյանը:

Թե ԱԺ պատվիրակությունն ինչ հանդիպումներ է ունենալու Փարիզում կամ ինչ քննարկումների է մասնակցելու, հայտնի չէ. համենայնդեպս, ԱԺ նախագահի համապատասխան որոշման մեջ գործուղման օրակարգի մասին ոչինչ չկա: Գործուղման հետ կապված ճանապարհածախսի, ներկայացուցչական ծախսերի, օրապահիկի եւ գիշերավարձի (7 անձի) ծախսերը կկատարվեն պետբյուջեի հաշվին, իսկ 6 անձի գիշերավարձի վճարումը կատարելու է հրավիրող կողմը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՊՈՒՏԻՆԻՆ ԱՅԼԵՎՍ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՉԷ

Կրեմլը չի հետաքրքրվում «Վագներ» մասնավոր ռազմական ընկերության հիմնադիր եւ ղեկավար Եվգենի Պրիգոժինով այն բանից հետո, երբ նա Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի միջնորդությամբ դադարեցրել է զինված խռովությունը. այդ մասին ասել է Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի մամլո խոսնակ Դմիտրի Պեսկովը: «Մենք չենք հետեւում նրա [Պրիգոժինի] տեղաշարժին, մենք ո՛չ դրա հնարավորությունն ունենք, ո՛չ էլ ցանկությունը»,- հայտարարել է Պեսկովը:

«Վագներ» մասնավոր զինվորական ընկերությունը հունիսի 23-ի երեկոյան հայտարարեց, որ ՌԴ պաշտպանության նախարարության ստորաբաժանումները հրթիռակոծել են վարձկանների ճամբարներն ու դիրքերը: Այդ ընկերության հետ կապված ալիքները հայտնում էին «բազմաթիվ զոհերի մասին»: Հրթիռակոծությանը հաջորդեց ընկերության ղեկավար Եվգենի Պրիգոժինի հայտարարությունն այն մասին, որ իրենք ուղիղ հակամարտություն են սկսում ՌԴ ռազմական ղեկավարության հետ:

ՌԴ քննչական կոմիտեն արդեն իսկ ռազմական հեղաշրջման փորձի մեղադրանք է առաջադրել Պրիգոժինին: Իսկ արդեն հունիսի 24-ի առավոտյան Պուտինը ուղերձով դիմեց Ռուսաստանի քաղաքացիներին՝ Եվգենի Պրիգոժինի հեղաշրջման փորձն անվանելով «դավաճանություն», ինչպես նաեւ «հարված Ռուսաստանի թիկունքին»:

Պուտինը տեղի ունեցածը համեմատել է 1917 թվականի իրադարձությունների հետ եւ խոստացել, որ բոլորը, որոնք «կանգնել են դավաճանության ճանապարհին, կպատժվեն»:

«Կձեռնարկվեն վճռական գործողություններ Դոնի Ռոստովում իրավիճակի կայունացման ուղղությամբ: Այն դեռեւս բարդ է: Փաստացի արգելափակված է քաղաքացիական եւ ռազմական կառավարման մարմինների աշխատանքը»,- հայտարարել է Վլադիմիր Պուտինը:

Սակայն հիմա հարց է առաջանում՝ ի՞նչն է պատճառը որ Մոսկվան այլեւ չի հետաքրքրվում Պրիգոժինով, մինչդեռ մինչեւ նրա՝ Բելառուս մեկնելը պաշտոնական Մոսկվան ոչ միայն պարբերաբար անդրադառնում էր նրա գործողություններին, այլեւ խոստանում, որ կպատժվի: Իսկ այսօր Պրիգոժինը ոչ միայն չի պատժվել, այլեւ Պուտինը դադարել է հետաքրքրվել նրանով: Գուցե պատճառն այն է, որ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն թույլ չի տվել, քանի որ վերջինս վաղուց անձամբ ծանոթ է Պրիգոժինի հետ (մոտ 20 տարի):

Նշենք նաեւ, որ Պեսկովը հայտարարել էր, որ Կրեմլում «երախտապարտ են Լուկաշենկոյին իր այդ ջանքերի համար»:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ ՉԿԱՆ

«Ադրբեջանից ակնկալել արդարադատություն որեւէ հայի նկատմամբ ուղղակի ֆանտաստիկայի ոլորտից է, եւ դա մենք պետք է հասկանանք»,-հուլիսի 7-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը՝ անդրադառնալով նրան, որ Ադրբեջանում հայ երկու ռազմագերիները, որոնց առեւանգել էին մեր տարածքից, դատապարտվեցին 11,5 տարվա ազատազրկման:

«Ինչքան էլ մեր իշխանությունները փորձում են Ադրբեջանի հետ հարաբերություններ կառուցել եւ մեզ կերակրել խաղաղության կեղծ օրակարգով, բոլորի համար պետք է ընկալելի լինի, որ Ադրբեջանը մեզ ընկալում է թշնամի եւ վերջ: Եթե Ադրբեջանը չի կատարում իր պարտավորությունը եւ չի վերադարձնում գերիներին, Նիկոլ Փաշինյանն ինչո՞ւ է գնում եւ ստորագրում այլ փաստաթուղթ, եւ, ընդհանրապես, ինչո՞ւ է մասնակցում բանակցությունների: Եթե մի ստորագրված փաստաթուղթը խախտվել է, կյանքի չի կոչվել, ի՞նչ իմաստ ունի շարունակել: Ընդհանրապես, ի՞նչ իմաստ ունեն բանակցությունները, եթե Փաշինյանը բանակցում է, նրանք կրակում են: Մենք առաջարկում ենք՝ պահանջատեր եղե՛ք ձեր ստորագրած փաստաթղթերի կետ առ կետ կատարմանը, եւ պահանջատեր եղե՛ք, որ Ադրբեջանի նկատմամբ ոչ թե հասցեական հայտարարություններ լինեն, այլ լինեն պատժամիջոցներ»,-ասաց Թագուհի Թովմասյանը:

Դիտարկմանը, որ իշխանությունները հայտարարում են, որ դրանով պատերազմ են հրահրում, ընդդիմադիր պատգամավորն ասաց. «Մենք ԱԺ-ում ելույթ ենք ունենում, ասում են՝ զգո՛ւյշ եղեք, պատերազմ կլինի, փողոցով քայլում ենք, ասում են՝ զգո՛ւյշ եղեք, պատերազմ կլինի: Այսինքն՝ Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը պատերազմի սպառնալիքով անընդհատ փորձում են կերակրել մեզ ու վախեցնել: Իսկ երբ մենք ոչինչ չէինք անում, եւ «Հայաքվե»-ն էլ չկար, քանի՞ անգամ Ադրբեջանը հարձակվեց Հայաստանի սուվերեն տարածքի վրա: Դա ո՞վ նպաստեց: Այնպես որ, նման հայտարարություն անողներն իրենք իրենց հետ ազնիվ չեն»:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆԸ՝ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

«Փաստորեն, Վարդան Օսկանյանը 10-15 տարի Ղարաբաղի հարցը ինքնորոշման եղանակով չէր կարողանում լուծել, վերջին երեք ամիսը նրան դավադրաբար Սերժ Սարգսյանն ու Նիկոլ Փաշինյանը չեն տվել, որպեսզի դա անի՞»,- երեկ՝ հուլիսի 7-ին, ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Գեւորգ Պապոյանը՝ անդրադառնալով ԱԳ նախկին նախարար Վարդան Օսկանյանի հայտարարությանը, թե իրեն թող տան 3 ամիս բանակցելու լիազորություն, եւ այդ ընթացքում Նիկոլ Փաշինյանը լռի, ինքը կկարողանա հայանպաստ լուծման բերել բանակցությունները:

«Վարդան Օսկանյանը 10 տարի եղել է ԱԳ նախարար. որքան գիտեմ, Լեւոն Տեր-Պետրոսյանի ժամանակ էլ 5-7 տարի եղել է ԱԳ փոխնախարար՝ ԼՂ հարցում ներգրավված. փաստորեն, Վարդան Օսկանյանին 15 տարի երեք ամիս էր պետք: Լեւոն Տեր-Պետրոսյանը նրան տվել էր 5 տարի, Ռոբերտ Քոչարյանը՝ 10 տարի, եւ այդ վերջին երեք ամիսը ոչ ոք իրեն չի տալիս, որ Ղարաբաղի հարցը լուծե՞ր: Սա աբսուրդ է, սա ի՞նչ հիմարություն է»,-ասաց նա:

Անդրադառնալով Օսկանյանի մեկ այլ հայտարարությանը, թե եթե Ստեփանակերտը բանակցի Բաքվի հետ, դա կնշանակի, որ մենք այլեւս չունենք Արցախ, Գեւորգ Պապոյանն ասաց. «Երբ Հայաստանը բանակցային սեղանի շուրջ հիմնական դերակատարն է եղել, դրա արդյունքում տեսանք, որ դիվանագիտորեն որեւէ լուծման հասնել հնարավոր չի եղել, այդ թվում՝ Վարդան Օսկանյանի օրոք: Ես հավատում եմ, որ Վարդան Օսկանյանն ուզեցել է հայանպաստ լուծում գտնել հարցին, բայց չի կարողացել:

Դա նշանակում է, որ այն ճանապարհով, որով Օսկանյանը գնացել է, որի մասին այսօր խոսում է, դա ոչ մի տեղ չտանող ճանապարհ է: Այդ ճանապարհը տարել է պատերազմի. հիմա եթե ինքն ուզում է 3 ամիս էլ գա, ու եւս մեկ պատերազմ ստանանք, ես Վարդան Օսկանյանին դա թույլ չեմ տա, որովհետեւ պատերազմներին, սովորաբար, Վարդան Օսկանյանի որդին չի մասնակցում, մասնակցում են մեր խեղճուկրակ ժողովրդի երեխեքը: Ես թույլ չեմ տա Վարդան Օսկանյանին եւ տարատեսակ թղթեր ստորագրողներին եւս մեկ պատերազմ բերել մեր ժողովրդի գլխին»,-հայտարարեց ՔՊ-ական պատգամավորը:

Հարցին, թե ինչ կկատարվի, եթե Բաքվի հետ ուղիղ բանակցողը լինի Ստեփանակերտը, նա արձագանքեց. «Եթե Բաքվի հետ ուղիղ բանակցողը լինի Ստեփանակերտը, Ստեփանակերտը կճանաչվի սուբյեկտ, եւ իրենք իրար հետ կքննարկեն: Ադրբեջանը խուսափում է դրանից, որովհետեւ դա իրեն ահավոր ձեռք չի տալիս, դրա համար էլ մինչեւ հիմա դա չկա: Մեր խնդիրն է դա անել, որովհետեւ եթե դա իրենց համար այդքան լավ բան լիներ, իրենք դա կընդունեին: Իրենք միշտ ցանկացել են Երեւանի հետ բանակցել, որովհետեւ այդտեղ իրենց դիրքերն ուժեղ են: Բանակցել արցախցու հետ նշանակում է բանակցել մի մարդու հետ, որն իր իրավունքների, իր կյանքի համար է բանակցում: Իսկ բանակցել Հայաստանի հետ նշանակում է բանակցել մեկի հետ, որն ուզում է ուրիշի տարածքի հետ կապված հարցեր լուծել»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑԻՆ

Ադրբեջանի կողմից առեւանգված հայ զինծառայողներն Ադրբեջանում տեղի ունեցած հերթական կեղծ դատավարությամբ ազատազրկման են դատապարտվել 11 տարի 6 ամիս ժամկետով:

Այս մասին տեղեկանում ենք ադրբեջանական լրատվամիջոցներից:

Նախօրեին կայացած դատական նիստի ժամանակ դատախազը հայ զինծառայողների համար պահանջել էր 12 տարվա ազատազրկում: Ադրբեջանը շինծու մեղադրանքներ է ներկայացրել իր իսկ զինծառայողների կողմից Հայաստանի ինքնիշխան տարածքից առեւանգված հայ զինծառայողներին՝ նրանց մեղադրելով իբր պետական սահմանը հատելու եւ ծանր հանցագործությունների նախապատրաստման համար:

ՄԹԵՐՔ՝ ՆԱԵՎ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԻՆ

Լեռնային Ղարաբաղի սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությունը տեղեկացնում է, որ անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին (հուլիսի 1-ի դրությամբ 18 տարին չլրացած) շաքարավազի ու ձեթի տրամադրման գործընթացը կիրականացվի նաեւ շաբաթ օրը:

Նախարարությունից խնդրում են սպասարկման կետեր ներկայանալ՝ հետեւելով էլեկտրաէներգիայի հովհարային անջատման գրաֆիկին:

ԲՈՒԺԱՌՈՒՆԵՐԸ ՏԵՂԱՓՈԽՎԵՑԻՆ

Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն»-ից երեկ 17 բուժառու ուղեկցողների հետ միասին, «Կարմիր խաչի» միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ, տեղափոխվել են Հայաստանի Հանրապետության մասնագիտացված բժշկական կենտրոններ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով գտնվում է Վրաստանում: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ՀՀ վարչապետի աշխատակազմի տարածած հաղորդագրությունից: Բաթումի միջազգային օդանավակայանում Նիկոլ Փաշինյանին դիմավորել է Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլին:

ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵՑ

Ա.Ա.-ն, զբաղեցնելով «Երեւանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի վարչատնտեսական աշխատանքների գծով տեղակալի պաշտոնը, 2015 թվականից մինչեւ 2019 թվականն ընկած ժամանակահատվածում, տեղեկացված լինելով ՊՈԱԿ-ում դաստիարակի մեկ դրույք ազատ հաստիքի մասին, պաշտոնական կեղծ փաստաթղթերով իր ծանոթ Լ.Ս.-ին ձեւակերպել է նշված հաստիքին:

Մասնավորապես՝ նախաքննությամբ տվյալներ են ձեռք բերվել, որ Ա.Ա.-ն գլխավոր հաշվապահ Ն.Ա.-ի եւ ՊՈԱԿ-ի տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Լ.Մ.-ի ու քաղաքացի Լ.Ս.-ի օժանդակությամբ, օգտագործելով ՊՈԱԿ-ի տնօրենի կնիքը, 2015 թվականի սեպտեմբերի 10-ին ՊՈԱԿ-ի տնօրենի անունից ստորագրել է հրաման եւ աշխատանքային պայմանագիր, որով Լ.Ս.-ին ընդունել է աշխատանքի՝ որպես դայակ, իսկ 2018 թվականի հունվարի 12-ին տնօրենի անունից ստորագրել է հրաման՝Լ.Ս.-ի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ:

Նշված ժամանակահատված Լ.Ս.-ն աշխատանքի չի հաճախել, իսկ ՊՈԱԿ-ի տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Լ.Մ.-ն, տեղյակ լինելով այդ մասին, 2015 թվականի սեպտեմբերի 10-ից մինչեւ 2018 թվականի հունվարի 15-ն ընկած ժամանակահատվածում աշխատակիցների ամենամսյա աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերում ներառել է Լ.Ս.-ի կողմից յուրաքանչյուր ամիս աշխատանքի հաճախելու վերաբերյալ կեղծ տեղեկություններ, ստորագրել, հաստատել է դրանք եւ հանձնել ՊՈԱԿ-ի տնօրենին: ՊՈԱԿ-ի տնօրենը, տեղեկացված չլինելով Լ.Ս.-ի կողմից փաստացի աշխատանքի չհաճախելու մասին, իր ստորագրությամբ եւ ՊՈԱԿ-ի կնիքով հաստատել է դրանք եւ հանձնել հաշվապահություն, որի հիման վրա գլխավոր հաշվապահ Ն.Ա.-ն, տեղյակ լինելով Լ.Ս.-ի կողմից աշխատանքի չհաճախելու մասին, Լ.Ս.-ի անվամբ դուրս է գրել 2 մլն 797 հազար 529 դրամ՝ որպես աշխատավարձ, արձակուրդային եւ աշխատավարձին հավասարեցված այլ վճարներ: Գումարը փոխանցվել է Լ.Ս.-ի անվամբ բացված, սակայն ի սկզբանե Ա.Ա.-ի կողմից փաստացի տնօրինվող բանկային քարտերին. վերջինս նույն ժամանակահատվածում մաս-մաս կանխիկացրել եւ այդկերպ յուրացման եղանակով հափշտակել է Լ.Ս.-ի անվամբ ՊՈԱԿ-ի ֆինանսական միջոցներից փոխանցված 2 մլն 797 հազար 529 դրամը:

Բացի այդ, ՊՈԱԿ-ի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 15-ից մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում տարբեր ընկերություններից ձեռք են բերվել 1 մլն 445 հազար 307 դրամի ամանորյա միջոցառումների կազմակերպման համար նախատեսված նվերներ եւ սննդամթերք, որոնք ՊՈԱԿ-ի աշակերտներին չեն հատկացվել:

Նույն ժամանակահատվածում ՊՈԱԿ-ի կարիքների համար ձեռք են բերվել նաեւ 2 մլն 325 հազար 500 դրամի տարբեր տնտեսական եւ կենցաղային ապրանքներ: Տնօրենի տեղակալ Ա.Ա.-ն, ի պաշտոնե պատասխանատու լինելով գույքի պահպանման համար, ձեռք բերված ապրանքները ՊՈԱԿ-ի պահեստ չի մուտքագրել եւ յուրացման եղանակով հափշտակել է «Երեւանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ին մատակարարված, իրեն վստահված խոշոր չափերով՝ 3 մլն 770 հազար 807 դրամի ապրանքները:

Բացի այդ, Ա.Ա.-ն «Երեւանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի հաշվեկշռում գտնվող ավտոմեքենայի համար կազմել է բենզինի դուրսգրման պահանջագրեր եւ ուղեթերթիկներ, դրանցում ներառել է կեղծ տվյալներ՝ իբրեւ նշված ավտոմեքենայով 2017 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2019 թվականի մարտի 18-ը ՊՈԱԿ-ի աշակերտներին մարզեր են տեղափոխել: Արդյունքում ՊՈԱԿ-ի միջոցներից դուրս է գրել 2 մլն 45 հազար 500 դրամին համարժեք բենզին, այդկերպ հափշտակել նշված գումարը:

2023 թվականի հունիսի 2-ին դատախազի կողմից որոշում է կայացվել ՊՈԱԿ-ի տնօրենի վարչատնտեսական աշխատանքների գծով տեղակալ Ա.Ա.-ի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (Պաշտոնական դիրքն օգտագործելով՝ խոշոր չափերով ուրիշի գույքը յուրացնելը կամ վատնելը), 01.07.2022 թվականին ուժի մեջ մտած Քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով (Իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով խոշոր չափերով վստահված գույքը հափշտակելը): ՊՈԱԿ-ի տնօրենի վարչատնտեսական աշխատանքների գծով տեղակալ Ա.Ա.-ին ներկայացվել է մեղադրանք:

Նախաքննության ընթացքում մեղադրյալ Ա.Ա.-ի կողմից ՊՈԱԿ-ին պատճառված 8 մլն 613 հազար 836 դրամ վնասն ամբողջությամբ վերականգնվել է:

2023 թվականի հունիսի 27-ին քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են Հակակոռուպցիոն դատարան:

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ հուլիսի 4-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում:

Ժամը 17:00-ի սահմաններում Երեւանի շտապօգնության 2-րդ ենթակայանից ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մաշտոցի բաժին ահազանգ է ստացվել, որ բժիշկների շտապօգնության 21-րդ խումբը կանչով մեկնել է Նազարբեկյան 15/6 հասցեում գտնվող «Գոլդն Սեքնդ» հյուրանոցային համալիր, որտեղ սենյակներից մեկում հայտնաբերվել է դի:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, նշված հասցե է ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Մաշտոցի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Կարեն Բունիաթյանի եւ քրեական հետախուզության բաժանմունքի պետ Գեւորգ Պողոսյանի գլխավորությամբ:

Ոստիկանները նշված հյուրանոցային համալիրի թիվ 205 սենյակում հայտնաբերել են Երեւանի բնակիչ 47-ամյա Գեւորգ Հ.-ի դին:

Ահազանգով ժամանել է նաեւ Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի խումբը՝ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել:

Քննիչի որոշմամբ՝նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն: Սպանություն հատկանիշներով քննչական բաժնում նախաձեռնվել է վարույթ:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐ

ԲԵՐՄԱՆ ԵՆ ԵՆԹԱՐԿՎԵԼ

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ հուլիսի 1-ին խմբակային խուլիգանություն է տեղի ունեցել Երեւանում: Այդ օրը՝ ժամը 23:10-ի սահմաններում, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կենտրոնական բաժին եւ ոստիկանության Մարաշի բաժանմունք օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Խանջյան փողոցի 50 հասցեում՝ Շախմատի տան մոտ, մի խումբ անձինք կռիվ են անում ու փայտերով իրար ծեծում:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, օպերատիվորեն դեպքի վայր են ժամանում Ոստիկանության կենտրոնական բաժնի, ոստիկանության Մարաշի բաժանմունքի եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի պարեկները, որոնք Շախմատի տան մոտ նկատում են մի խումբ անձանց, լսում բղավոցի ձայներ. վերոնշյալ անձինք ոտքերով եւ ձեռքերով փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց, հնչեցրել հայհոյանքներ՝ դիտավորյալ կերպով խախտելով հասարակական կարգը:

Ոստիկանների եւ պարեկների օպերատիվ գործողությունների արդյունքում նշված վայրից կռվի մասնակիցները բերման են ենթարկվել ոստիկանության Մարաշի բաժանմունք:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ բերման ենթարկվածներնն են Երեւանի բնակիչներ 21-ամյա Մովսես Մ.-ն, 21-ամյա Վահան Վ.-ն, 19-ամյա Մանվել Ա.-ն, 21-ամյա Արտաշես Բ.-ն, 23-ամյա Արմեն Ղ.-ն, 28-ամյա Սարգիս Ա.-ն եւ 20-ամյա Ալեքսանդր Մ.-ն:

Նշված անձինք այնուհետեւ ոստիկանության Մարաշի բաժանմունքից ներկայացվում են Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ բերման ենթարկվածներից մի քանիսը ունեն մականուններ, նրանց ընկերական շրջապատում դիմում են Շտիռլից, Չերչիլ, Ռեմբո, Վանդամ եւ Ջենով Օհան:

Լուսանկարը՝Գագիկ Շամշյանի

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 6-ից 7-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 47 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓԱԿԵԼ ԵՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Հուլիսի 3-ին Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ գյուղի բնակիչները, բողոքի ակցիա իրականացնելով, մոտ 15 րոպե փակել են իրենց գյուղով ձգվող Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհը: Նրանք դժգոհել են այն բանից, որ իրենց համագյուղացի Վահրամ Շարոյանը հունիսի 21-ին ազատվել է Հաղթանակ բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնից: Վ. Շարոյանը 2012 թվականին ընտրվել է Տավուշի մարզի Հաղթանակ համայնքի ղեկավար: 2016 թվականին Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանում տեղի է ունեցել համայնքների խոշորացում, ձեւավորվել է 3 խոշոր համայնք՝Նոյեմբերյան, Կողբ եւ Այրում, Հաղթանակ գյուղը ներառվել է Այրում համայնքի կազմում: 2021 թվականին այդ 3 խոշոր համայնքները կազմել են Նոյեմբերյան ավելի խոշոր համայնքը:

Համայնքների խոշորացումից հետո՝ 2016-2023 թվականներին, Վահրամ Շարոյանը պաշտոնավարել է որպես Հաղթանակ բնակավայրի վարչական ղեկավար: Նրան աշխատանքից ազատելու պատճառն այն է, որ ՏԻՄ օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ 1000-ից ավելի բնակիչ ունեցող բնակավայրերի վարչական ղեկավարները պարտադիր պետք է ունենան բարձրագույն կրթություն, իսկ 40 -ամյա Վահրամ Շարոյանը ներկայումս հեռակա սովորում է ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 3-րդ կուրսում: Ճանապարհի փակած հաղթանակցիների հետ հանդիպման է գնացել Նոյեմբերյան խոշոր համայնքի ղեկավարի տեղակալ Միհր Աղամյանը, որը հաղթանակցիներին հայտնել է, որ իրենք դժգոհություն չունեն, գոհ են Վահրամ Շարոյանի աշխատանքից, սակայն օրենքն օրենք է:

Հաղթանակցիների կողմից ճանապարհ փակելու ակցիայի մասին տեղյակ է նաեւ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը: Հաղթանակցիների սերն ու հարգանքը վայելող Վ. Շարոյանը տեղյակ չի եղել համագյուղացիների ակցիայից, նա այդ օրը գործերով եղել է Վանաձորում: Նա հետո «Ֆեյսբուք»-ում շնորհակալություն է հայտնել համագյուղացիներին: Վահրամ Շարոյանի ընտանիքը շատ հարգված է Հաղթանակ գյուղում, այդ ընտանիքը հերոսական պատմություն ունի: Վահրամի հայրը՝ 1953 թվականին ծնված Գարեգին Շարոյանը, եղել է «Արծիվ-մահապարտներ» հատուկ նշանակության գումարտակի 6-րդ դասակի հրամանատարը, նա զոհվել է 1992թ. սեպտեմբերի 22-ին Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի դիրքերում, հետմահու արժանացել է կապիտանի կոչման եւ պարգեւատրվել Հայաստանի Հանրապետության «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

Վահրամի եղբայրը՝ 1978 թվականին ծնված, ավագ լեյտենանտ Վահագն Շարոյանը, զոհվել է 2002թ. նոյեմբերի 11-ին՝ Տավուշի մարզի Կոթի գյուղի մարտական հենակետերից մեկում մարտական խնդիր կատարելիս:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏԿՅԱԼՆԵՐ

ՏԿԵ ՆԱԽԱՐԱՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը դատարանին նշանակվել է 2021 թվականի օգոստոսի 2-ին: Գեղարքունիքի մարզի նախկին մարզպետը 2022 թվականի հայտարարատու տարվա սկզբին հայտարարագրել է 4 անշարժ գույք՝ մեկ բնակելի տուն եւ երեք հողամաս, որոնք գտնվում են Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում: Նշված անշարժ գույքերը հայտարարատու տարում նվիրատվությամբ փոխանցել է եղբորը՝ Վահան Սանոսյանին: Տարեվերջին Սանոսյանը ոչ մի գույք չի հայտարարագրել, սակայն հայտարարագրել է մեկ բնակարան՝ Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում, որը փաստացի դատկանում է այլ անձի, սակայն շահագործվում է նախարարի կողմից: Նշված բնակարանը հայտարարագրված է նաեւ կնոջ եւ դստեր հայտարարագրում: Նույնկերդ Սանոսյանը հայտարարագրել է մեքենա, որը փաստացի իրեն չի դատկանում, այլ դարզապես շահագործվում է իր կողմից:

Հանձնված եւ վերադարձված փոխառությունները տարեվերջին կազմել են 42 մլն 153 հազար դրամ «ՄԻԿՇԻՆ» ՍՊԸ-ից:

Նախարարի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2 մլն 916 հազար դրամ, նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 7 մլն 200 հազար դրամ եւ 150 հազար ռուբլի, իսկ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 23 մլն 342 հազար դրամ, որից 20 մլն 627 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունից: Եկամուտներից 2 մլն 703 հազար դրամը եկամտահարկի վերադարձ է, որը ձեռք բերված բնակարանի հիպոտեկի մարման համար է, սակայն հիպոտեկով ձեռք բերված՝ բազմաբնակարան շենքում բնակարանի մասին խոսվում է միայն «ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում, այն էլ կազմում է 42 մլն 153 հազար դրամ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Սանոսյանը բնակարան ունի նաեւ «Երազ» բնակելի թաղամասում, որը հայտարարագրում չկա:

Սանոսյանը հանգստի համար ծախսել է 2 մլն 400 հազար դրամ, ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճարը կազմել է 2 մլն 250 հազար դրամ, վարկի մարման համար վճարվել է 6 մլն դրամ:

Գնել Սանոսյանի կինը՝ Ռուզաննա Տոնոյանը, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունում քարտուղարության փաստաթղթաշրջանառության բաժնի ավագ մասնագետ է: Նա հայտարարագրել է 6 անշարժ գույք, որից մեկը բնակարան է, իսկ 5-ը հողամաս է, որոնք գտնվում են Գեղարքունիքի մարզի Ծակքար գյուղում: Տոնոյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2 մլն 142 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 2 մլն եւ 260 հազար ռուբլի, նրա հաշվետու տարվա եկամուտները կազմել են 4 մլն 913 հազար դրամ, որից 750 հազարը կրկին եկամտահարկի վերադարձ է:

Նրանց դուստրը՝ Ջեսիկա Սանոսյանը, հայտարարագրել է 3 մլն 102 հազար դրամ բանկային ավանդ, իսկ բանկային հաշիվների մնացորդները կազմում են 9 հազար 737 դրամ: Աղջկա հաշվետու տարվա եկամուտները կազմել են 102 հազար դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՔՊ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Քաղաքացիական դայմանագիր» խմբակցության դատգամավոր Գուրգեն Արսենյանը 2022 թվականի հայտարարտու տարում հայտարարգրել է 17 անշարժ գույք, որից 2-ը բնակելի տուն է, իսկ 15-ը՝ հողամաս կամ հասարակական նշանակություն ունեցող շինություն:

Գուրգեն Արսենյանը հայտարարգրել է 4 մարդատար մեքենա՝ BENTLEY, MERCEDES-BENZ, NISSAN եւ RANGE ROVER մակնիշների:

Պատգամավորի բաժնային արժեթղթերը եւ այլ ներդրումներն ընդհանուր առմամբ կազմում են 769 մլն 456 հազար դրամ եւ 3 հազար 250 ռուբլի: Տվյալ տարվա վերջում առկա պարտքային եւ այլ արժեթղթերի արժեքը Նյու Յորք Nasdaq-ից կազմել է 2 մլն 083 հազար դոլար: Հանձնված եւ վերադարձված փոխառություններն ընդհանուր առմամբ կազմել են 69 մլն 300 հազար դրամ եւ 2 մլն 870 հազար դոլար:

Տվյալ տարվա սկզբում առկա չորս միլիոն դրամից կամ դրամ համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող 16 գույք է հայտարարագրել պատգամավորը, որոնց ընդհանուր արժեքը 917 մլն 255 հազար 700 դրամ եւ 426 հազար 500 դոլար:

Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 40 եվրո, 800 դոլար եւ 32 հազար 571 դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները՝ 628 հազար դոլար, 5 մլն 500 հազար դրամ եւ 16 հազար 500 եվրո:

Նման արժողությամբ թանկարժեք գույք ունեցող պատգամավորի տարեկան եկամուտը կազմում է 19 մլն 778 հազար 260 դրամ, որից 8 մլն 248 հազար 260 մլն դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԱԺ աշխատակազմից:

Արսենյանը հայտարարագրել է 2 մլն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող 5 մլն 500 հազար դրամ միանվագ ծախսեր:

Արսենյանը մասնակցություն ունի 8 առեւտրային կազմակերպություններում՝ «Էլդորադո-Արմեն» ՍՊԸ՝ 51% «Վկրեդիտ 24» ՍՊԸ-ում՝ 13%, իսկ «ԱՐՍՕՅԼ» ՓԲԸ-ում, «Յունիքորն սերվիս» ՍՊԸ-ում, «Յունիքորն», «Յունիքորն Ֆլորա»-ում, «Յունիքորն Քոնսթրաքշըն»-ում եւ «Յունիքորն Գրուպ»-ում՝ 100% բաժնեմաս:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ՃՏՊ. 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ՝ ՄԻՋԱԴԵՊԻՑ

Հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ, աշխարհի բազմակի չեմպիոն Արթուր Աբրահամը նախօրեին զավակների հետ Հյուսիսային պողոտայում զբոսնելիս փողոցում գործունեություն ծավալող երաժիշտներին առաջարկել է առավոտից երեկո չմիացնել բարձրախոսները, քանի որ Հյուսիսային պողոտան բնակելի թաղամաս է, այդ ձայները խանգարում են բնակիչներին, հատկապես մանկահասակ երեխաների քունն է խաթարվում: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնեց Արթուր Աբրահամի մամուլի խոսնակ Սիրան Գրիգորյանը:

«Արթուրը հստակ բացատրել է այդ երաժիշտներին, որ իրենց միացրած բարձր երգ-երաժշտության պատճառով ոչ միայն երեխաների քունն է խաթարվել, այլեւ բնակիչները չեն կարողանում հանգիստ նստել իրենց տներում կամ դուրս գալ պատշգամբ: Այսքանը: Որեւէ լուրջ միջադեպ տեղի չի ունեցել»,- եզրափակեց մարզիկի մամուլի խոսնակը:

Հիշեցնենք, որ նախօրեին տեսանյութ էր տարածվել համացանցում պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ, աշխարհի բազմակի չեմպիոն Արթուր Աբրահամի մասնակցությամբ: Հյուսիսային պողոտայում արված կադրերում բռնցքամարտիկը վիճաբանում էր քաղաքացու հետ, հայհոյում:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ԾԱԽՍԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ

Հայաստանի պետական բյուջեի ծախսերը 2023 թվականի առաջին եռամսյակում ավելացել են: Այս մասին ԱԺ-ում ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի արտահերթ նիստում 2023 թվականի առաջին եռամսյակում պետբյուջեի կատարողականի մասին հաշվետվության ներկայացման ժամանակ հայտարարեց ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

Այնուամենայնիվ, պլանի էական թերակատարում եղել է, հատկապես՝ կապիտալ ծախսերի մասով, որոնք, 2022 թվականի համեմատ, ավելի ցածր են ոչ միայն տոկոսային, այլեւ բացարձակ արտահայտմամբ:

«Դրա արդյունքում այդ ֆիսկալ ազդակը բացասական էր: Եկամուտների հավաքագրումը շարունակվում է՝ արձանագրելով բարձր տեմպեր՝ պայմանավորված տնտեսական աճով եւ գների աճով: Այնուամենայնիվ, ընթացիկ տարվա տեմպերը զիջել են 2022-ի ցուցանիշները: Դրա վրա բացասաբար է ազդել միջոցների թերծախսումը»,- պարզաբանեց Հովհաննիսյանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հուլիսի 24-ին գումարվելու է «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում Zooշ հավելվածի միջոցով:

«Յունիբանկ»-ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Տեղեկատու կենտրոն՝ +374 10 59 55 55:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ (1)

Գ

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 01.08.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0719/04/20 սնանկության գործով 04.09.2020 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «Մուռմել-Արմանի» ՍՊԸ ստորեւ նշված շարժական գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 2 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2004թ. արտադրության, 632 US 65 պետհամարանիշով, նարնջագույն, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH13ZZ15M400073, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 6,318,000 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «LECITRAILER» մակնիշի, D 2440 տիպարի, 2000թ. արտադրության, 228 L 01 պետհամարանիշով, գույնը՝ սպիտակ, թափքի տեսակը՝ սառնարան, ՏՄ տեսակը՝ կիսակցորդը (նույնացման համար՝ VV1F3FA1XSN097823, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 7,209,000 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18.430 տիպարի, 2006թ. արտադրության, 090 PP 96 պետհամարանիշով, գույնը՝ դեղին, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH13ZZ97M464106, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 7,290,000 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2005թ. արտադրության, 756 US 65 պետհամարանիշով, գույնը՝ կարմիր, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH06ZZ85M423273, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 6,885,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480103421570000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս քան երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 044200454, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ (2)

Գ

Արմեն Վալերիի Մկրտչյանի սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 03.08.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/1328/04/20 սնանկության գործով 22.09.2020 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված Արմեն Վալերիի Մկրտչյանի ստորեւ նշված անշարժ գույքի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտով.

Լոտ 1 - Պարտապանի պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Ջուլիետտա Հրաչյայի Մեսրոպյանին, Սերգեյ Հրաչյայի Մեսրոպյանին եւ Հայաստան Արսենի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ օգտին գրավադրված ՀՀ, Երեւան, Աջափնյակ, Սիսակյան փողոց 18բ շենքի թիվ 5 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, (մակերեսը՝ 63,2քմ, հարկայնությունը՝ 9/2 սեփականության իրավունքի վկայական՝ 11092012-01-1122, կադաստրային ծածկագիր՝ 01-001-0021-0001-014-005):

Մեկնարկային գին՝ 22,320,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում է գրավի առարկա: Գույքը ծանրաբեռնված է բնակիչներով, որոնք գույքի ձեռք բերման դեպքում ենթակա են վտարման:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 200,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման Արմեն Վալերիի Մկրտչյանի սնանկության գործով թիվ 2480103340300000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԶՈՅԱ ԹՈՒԽՄԱՆՈՎԱՅԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհրդային կոմպոզիտոր Դավիթ Թուխմանովի թոռնուհի Զոյա Թուխմանովան ուսումնասիրել է Վենետիկի Սուրբ Ղազար հայկական կղզու երաժշտական արխիվը, տարբեր ստեղծագործողների ստեղծած նյութերը եւ, բացահայտելով Պասկալ Սինանյանին, որոշել է հայ հասարակությանը ծանոթացնել նրա ժառանգությանը: Ուսումնասիրության արդյունքում տարիներ առաջ Իտալիայում Զոյա Թուխմանովան համերգով է հանդես եկել, կատարել Սինանյանի գործերը, որոնք բարձր գնահատանքի են արժանացել:

Հուլիսի 6-ին էլ Հայաստանում ապրող երաժշտասերները համերգը վայելեցին Երեւանում՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Համերգից բացի, տեղի ունեցան Սինանյանին նվիրված գրքի եւ CD-ի շնորհանդեսները:

Լրագրողների հետ զրույցում Թուխմանովան ասաց՝ Պասկալ Սինանյանը հայ Շոպենն է: «Սինանյանը մեծ ընտանիք է ունեցել: Նրա հայրը եղել է Գրիգոր Սինանյանը, որը հինգ զավակ է ունեցել: Պասկալ Սինանյանը, նրա եղբայրներն ու քույրերը ստեղծել են առաջին սիմֆոնիկ նվագախումբը Ստամբուլում:

Նրանք տարբեր երաժշտական գործիքներ են նվագել՝ ջութակ, թավջութակ, դաշնամուր: Պասկալ Սինանյանին ճանաչում են որպես ջութակահարի, սակայն նա հիանալի դաշնակահար է եղել ու դաշնամուրի եւ սիմֆոնիկ նվագախմբի համար հրաշալի ստեղծագործություններ է գրել»,-պատմեց Թուխմանովան:

Նրա խոսքով՝ Սինանյանը յոթանասունից ավելի ստեղծագործությունների հեղինակ է: Պասկալ Սինանյանը գրել է վալսեր, պոլկաներ, մազուրկաներ, քայլերգեր եւ այլն: Թուխմանովան ընդգծեց՝ ինքը շատ ուրախ կլինի, եթե երիտասարդները ուսումնասիրեն ու կատարեն Սինանյանի գործերը: Զոյա Թուխմանովան ունի հայ-ռուսական արմատներ: Երաժշտության եւ հայկականության հանդեպ անմնացորդ սեր տածելով՝ Թուխմանովան իրականություն է դարձրել այդ կարեւոր գիտական աշխատանքը. անհայտ, բայց հսկայական ժառանգություն թողած Պասկալ Սինանյանի ստեղծագործությունները պեղել է արխիվից եւ վերադարձնում է իր ժողովրդին, ներկայացնում երաժշտասեր հասարակությանը:

Թուխմանովան ոսկե մեդալով ավարտել է Մոսկվայի Չայկովսկու անվան կոնսերվատորիայի դիրիժորության ֆակուլտետը, նույն հաջողությամբ ավարտել է Վենետիկի «Բենեդետտո Մարչելլո» կոնսերվատորիայի երգչախմբային երաժշտության եւ դիրիժորության ֆակուլտետը: Աշխատել եւ համագործակցել է աշխարհահռչակ երաժիշտների հետ: Չորս տարի աշխատելով Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային թատրոնում՝ վերադարձել է Վենետիկ, որտեղ ղեկավարում է երկու երգչախումբ, աշխատում է Վենետիկի Սան Մարկո եկեղեցու երաժշտական բաժնում:

Գրքի եւ CD-ի ստեղծման հովանավորն է «Հայոգի» հիմնադրամը:

ՄԱՐՔԱԿԱՆ

ԻՆՉՈ՞Ւ ՈՏՔԻ ՉԿԱՆԳՆԵՑ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում մանրամասնեց երեկ Նազիկ Ավդալյանի մասնակցությամբ մեծ աղմուկ բարձրացած դեպքի հանգամանքները. «Նազիկ Ավդալյանի փոխանցմամբ՝ դա որեւէ ակցիա չի ենթադրել իրենից, պարզապես այդ պահին որդուց զանգ է ստացել եւ շտապել է պատասխանել նրան, քանի որ տղան տանը միայնակ է եղել: Կքանստելու հանգամանքն էլ պայմանավորված է եղել նրանով, որ հեռախոսն այդ պահին դրված է եղել լիցքավորման, լարն էլ կարճ է եղել. կքանստել է, որպեսզի կարողանա խոսել»:

Կարեն Գիլոյանը մեզ հետ զրույցում նշեց, որ Ավդալյանը խոսել է Ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի ղեկավարության հետ, բացատրել իրավիճակը, իրենք էլ կարծես ընդունել են: «Հնարավոր է, այո, նաեւ պատիժ կիրառվի նրա նկատմամբ»,-եզրափակեց նա:

Հիշեցնենք, որ օրերս Մոլդովայի մայրաքաղաք Քիշնեւում ընթացող պատանիների (15-17 տարեկան) ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում մրցավար Նազիկ Ավդալյանը Թուրքիայի հիմնի ժամանակ ոտքի չի կանգնել:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՄԲԱՊԵԻՆ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի ղեկավարությունը փոխարինող է գտել 24-ամյա ֆրանսիացի հարձակվող Կիլիան Մբապեին, որը, ամենայն հավանականությամբ, այս ամիս կտեղափոխվի Մադրիդի «Ռեալ»:

Փարիզյան ակումբը կփորձի ձեռք բերել Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» եւ Ֆրանսիայի հավաքականի 26-ամյա հարձակվող Ուսման Դեմբելեին. հաղորդում է Footmercato-ն:

Մինչեւ հուլիսի 31-ը Դեմբելեի հրաժարագինը 50 միլիոն եվրո է: Նրա ծառայություններով հետաքրքրված է ՊՍԺ-ի նորանշանակ իսպանացի գլխավոր մարզիչ Լուիս Էնրիկեն:

Անցած մրցաշրջանում Դեմբելեն «Բարսելոնայի» հետ բոլոր մրցաշարերում մասնակցել է 35 հանդիպման, խփել է 8 գոլ, կատարել 9 գոլային փոխանցում: Նրա պայմանագիրը կատալոնական ակումբի հետ նախատեսված է մինչեւ 2024թ. հունիս: Transfermarkt-ը Դեմբելեի տրանսֆերային արժեքը գնահատում է 60 միլիոն եվրո:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

ԽԱՄԱՃԻԿՆԵՐԻ ԹԱՏՐՈՆԸ՝ ԹԵՀՐԱՆՈՒՄ

Թեհրանի «Թեաթրե շահր» ցուցադրական արվեստների համալիրում հունիսի 29-ին մեկնարկել է «Թեհրան-մոբարաք» 19-րդ միջազգային տիկնիկային փառատոնը:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Իրանում ՀՀ դեսպանության տարածած հաղորդագրությունից, փառատոնին մասնակցելու նպատակով Թեհրան էր ժամանել Երեւանի խամաճիկների պետական թատրոնի դերասանական կազմը:

Դերասանները չորս անգամ ներկայացել են համալիրի «Ղաշղայի» դահլիճում Սամսոն Մովսիսյանի բեմադրած «Կարապի լիճը» ներկայացումով, նաեւ առանձին ներկայացումով հանդես եկել հայ մանուկների համար Հայ համալսարանականների ընդհանուր միության «Նիկոլ Աղբալյան» դահլիճում:

Հուլիսի 3-ի «Ղաշղայի» դահլիճի բեմադրությանը ներկա էին ԻԻՀ-ում Հայաստանի Հանրապետության դեսպանության խորհրդական Սերգեյ Գրիգորյանը, Մշակույթի նախարարության ցուցադրական արվեստների վարչության պետ Նազարին եւ Թեհրանի 19-րդ միջազգային տիկնիկային փառատոնի պատասխանատու Հեջազիֆարը:

«Թեհրան-մոբարաք» 19-րդ միջազգային տիկնիկային փառատոնը շարունակվելու է մինչեւ հուլիսի 8-ը:

● Հունիսի 9-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Քաջ Նազար» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՐՑ. Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի նպատակը ո՞րն է:

Լիլիթ Եղիազարյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հանձնաժողովի նպատակը, «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2.2-րդ մասի համաձայն, լիազորված մարմնին (բարեգործության ոլորտը համակարգող Հայաստանի Հանրապետության փոխվարչապետին) առաջարկություններ ներկայացնելն է լիազորված մարմնի գործառույթների իրականացման վերաբերյալ:

Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում համագործակցում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, ինչպես նաեւ բարեգործության մասնակիցների եւ այլ կազմակերպությունների հետ:

Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողով

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Իր գործառույթների իրականացման նպատակով հանձնաժողովը կարող է դիմել Հայաստանի Հանրապետության պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին եւ այլ կազմակերպությունների իր գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվություն, վերլուծական նյութեր եւ այլ փաստաթղթեր ստանալու համար:

Հանձնաժողովը կարող է հրավիրել համաժողովներ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բարեգործական ծրագրերին առնչվող հարցերի քննարկման նպատակով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀՈՂ

ՀԱՐՑ. Համայնքներում հողի վարձակալության կամ ձեռք բերման համար ո՞ւմ է հարկավոր դիմել:

Սիմոն Օսեյան (53 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համայնքներում պետության եւ համայնքների հողերի հողամասերի վարձակալության կամ ձեռք բերման համար հարկավոր է դիմել համայնքի ղեկավարին, իսկ վարձակալության իրավունքը տրամադրվում է մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով:

Գեղարքունիքի մարզպետարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աճուրդային կարգով հողամասերի օտարման եւ մրցութային կարգով վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին հայտարարությունները պարտադիր հրապարակվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում եւ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ հետեւյալ հասցեով՝ http://www.azdarar.am:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հուլիսի 6-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 12:30-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կենտրոնական բաժին ահազանգ է ստացվել, որ գիշերը՝ ժամը 02:00-ից մինչեւ 05:00-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձը կամ անձինք դիտավորությամբ վնասել են Օղակաձեւ զբոսայգու 6-րդ հատվածում գտնվող «Սքեյթ Պարկի» արձանը: Պարզվել է, որ ահազանգը համապատասխանում է իրականությանը:

Դեպքի փաստով Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում «գույքը ոչնչացնելը կամ վնասելը» հատկանիշներով նախաձեռնվել է վարույթ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 9 + 14 +26 + 30
Կոտայքի լեռներ	+ 9 +14 +25 + 28
Կոտայքի նախալեռներ	+16 + 18 +32 + 34
Գեղարքունիք	+11 + 15 +22 + 26
Լոռի	+ 9 + 14 +23 + 27
Տավուշ	+12 + 16 +26 + 31
Արագածոտնի լեռներ	+ 9 + 12 +23 + 26
Արագածոտնի նախալեռներ	+16 + 19 +23 + 26

Արարատ	+18 + 21 +35 + 37
Արմավիր	+15 + 18 +34 +36
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 12 +23 + 25
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 21 +35 + 37
Սյունիքի հովիտներ	+17 + 20 +33 + 37
Սյունիքի նախալեռներ	+11 + 13 +26 + 29
ԼՂՀ	+17 + 21 +32 + 37
Երեւան	+18 + 20 +35 + 37

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.7.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*